**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 03.04.2019թ.
ժամը $10^{00}$

Մասնակցում էին՝
**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության պետ Լ. Խաչատրյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ հրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ռստոյան,
ՀՀ ՊՆ աշխատակազմի ՎՏ վարչության հրատարակչական բաժնի պետի տեղակալ Ա. Մուրադյան,
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Գ. Գևորգյան:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ.Գևորգյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

---

(Գ.Գևորգյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար լուսափորագրության և արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Գ.Գևորգյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:
2.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), սակայն, քանի որ մասնակցի ներկայացրած փաստաթղթերը տնօրենի փոխարեն թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատել է վերջինիս կողմից լիազորված անձը, իսկ հայտում բացակայում է այդ իրավասությունը վերապահված լինելու մասին որևէ փաստաթուղթ, ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը կասեցրել է հայտերի բացման նիստը և 03.04.2019թ. մասնակցին ծանուցել անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ-ն շտկել է անհամապատասխանությունը, և 05.04.2019թ. նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Գ.Գևորգյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքին և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

| Չ/հ | Գնման առարկայի անվանումը | Չ/մ | Քանակը | Նախահաշվային գումարը | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | Հաղթող կազմակերպության | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | անվանումը | առաջարկած գինը | | անվանումը | առաջարկած գինը | |
| | | | | | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | | առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով |
| 1 | լրատփորագրություն ծառայություններ /Կնիք/ | մմ² | 9000 | 450000 | «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ | 412500 | 495000 | Բանակցություններ | | |
| 2 | արխիվացման ծառայություններ /Գրքերի կազմարարական ծառայություն/ | հատ | 3907 | 3907000 | «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ | 3255833.33 | 3907000 | Բանակցություններ | | |

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով գնման ընթացակարգին հրավերի պահանջներին համապատասխան հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից և այդ մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է պատվիրատուի տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցները, ուստի 05.04.2019թ. գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, գների նվազեցման նպատակով վարվել են բանակցություններ: Ի գիտություն՝ «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ տնօրենը ներկա է գտնվել նիստին: Բանակցությունների արդյունքում «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ-ն 1-ին չափաբաժնի մասով իր կողմից ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է՝ սահմանելով 450000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, իսկ 2-րդ չափաբաժնի մասով իր կողմից ներկայացրած գնային առաջարկը թողել է անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

(Գ.Գևորգյան)

4.1 05.04.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «ՀԵՆԱԿԵՏ» ՓԲԸ-ն:
4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները:
4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

(Գ.Գևորգյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

(Գ.Գևորգյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-8/2» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից ամփոփման վերջնաժամկետի օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Լ. Խաչատրյան

**Գնահատող** Գ. Ոստյան

**Գնահատող** Ա. Մուրադյան

**Գնումները համակարգող** Գ. Գևորգյան